ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

N 03/27.1/4145-19
05 04
«.....» .....2019թ.

ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխի պահանջներով, ուսումնասիրելով առկա նյութերը պարզեցի.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ, 2015թ. հոկտեմբերի 19-ին ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում կազմակերպելու համար տրվել է թիվ ՏՖ N 05601 լիցենզիան, որի համար ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ 2015թ. հոկտեմբերի 5-ին համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ մասի 15.6-րդ կետի 1-ին պարբերության՝ ուղևորափոխադրումները Երևան քաղաքում կազմակերպելու համար վճարել է ամսական բազային տուրքի 12-ապատիկի չափով, այսինքն՝ 12000 դրամ:

2017թ. հունվարի 25-ին ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ դիմել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար տրված թիվ ՏՖ N 05601 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար:

2017թ. հունվարի 30-ին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի թիվ 82-Ա հրամանով ուժը կորցրած է ճանաչվել թիվ ՏՖ N 05601 լիցենզիան և ներդիրը:

2017թ. հունվարի 30-ի դրությամբ ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ՝ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունները պատշաճ չկատարելու հետևանքով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պետական տուրքի գծով պարտավորությունները կազմել են 226122 ՀՀ դրամ, որից 168000 ՀՀ դրամը պետական տուրքի գումար, իսկ 58122 ՀՀ դրամը՝ տուրքի տույժ:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am

ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ 2018թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության թիվ 27/27.1/17316-18 գրությամբ տեղեկացվել է իր պարտավորությունների մասին և առաջարկվել է 10-օրյա ժամկետում մարել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առաջացած պետական տուրքի պարտքը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը: Սակայն վերջինիս կողմից պատասխան չի ստացվել:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Պետական տուրք վճարողները պարտավոր են՝

- ժամանակին և լրիվ վճարել սույն օրենքով սահմանված պետական տուրքերը.

- պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել պետական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրքը վճարվում է լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, գործունեության իրականացման թույլտվության կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրման, գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, գործունեության իրականացման թույլտվության վերաձևակերպման համար.

- ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը.

- սույն օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ մասի 15.6-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

ա) Երևան քաղաքում՝ ամսական բազային տուրքի 12-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 34-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 120-ապատիկի չափով,

բ) այլ քաղաքներում՝ ամսական բազային տուրքի 8-ապատիկի չափով, կամ եռամսյակային բազային տուրքի 23-ապատիկի չափով, կամ տարեկան բազային տուրքի 80-ապատիկի չափով,

գ) այլ վայրերում՝ ամսական բազային տուրքի 5-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 13.5-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 45-ապատիկի չափով,

դ) սահմանամերձ գյուղերում՝ ամսական բազային տուրքի 4-ապատիկի չափով կամ եռամսյակային բազային տուրքի 9-ապատիկի չափով կամ տարեկան բազային տուրքի 30-ապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Պետական տուրքը հաշվարկում և գանձում են սույն օրենքով սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք:Նույն հոդվածի վերջին պարբերության համաձայն օրենքի 19-րդ հոդվածի 15.6-րդ ենթակետով սահմանված ամսական կամ եռամսյակային հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա ամսվա կամ եռամսյակի համար կատարվում է համապատասխանաբար մինչև առաջիկա ամիսը կամ եռամսյակը սկսելը՝ լիազոր մարմնի կողմից համապատասխան լիցենզիայի վրա նշված լիցենզիաների տրման ամսաթվից ոչ ուշ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժի հետ միասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 87-րդ և 88-րդ հոդվածների պահանջներով որոշեցի ՝

1. Պահանջել ԷԴԳԱՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՑ ՀՀ պետական բյուջեի 900005000311 հաշվեհամարին վճարել 226122 ՀՀ դրամ, որից 168000 ՀՀ դրամը պետական տուրքի գումար, իսկ 58122 ՀՀ դրամը՝ տուրքի տույժ:

2. Պետական տուրքի գծով սույն որոշման մեջ նշված պարտավորությունները անհրաժեշտ է ամբողջությամբ մարել սույն որոշումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն այն ստանալու պահից երկու ամսվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ Հ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am